


նական երանութեան ճանապարհ բաց արել մեր առաջ: Արտաքին նշաններ պէտք չեն մեզ Աստուծոյ իշխանութիւնն ու ողորմութիւնը յիշեցնելու համար: Թէ իբրեւ անհատ ի սկզբանէ անտի և թէ իբրեւ ամբողջ ազգութիւն այն օրուանից: երբ կանգուն է Միաձնի կառուցած լուսեղէն տաճարը՝ Աստուծոյ պատկերն ենք կրում մենք մեր հոգու խորքում: Փրկչական նշանի դրոշմը մեր հոգեւոր ներքին կեանքի բոլոր դարձուածներում: Եւ եթէ նայսեր պատկերն անարդողը, իշխանութեան հըրամանին հակառակողը, ըստ առաքելական բանին, դատաստանի ներքոյ պէտք է ընկնի՝ ինչ պէսկարող է դատապարտելի չլինել նա: որ Աստուծոյ պատկերն է անարգում: երկնաւոր իշխանութեան հրամանին հակառակում: Մենք զիտենք: որ Աստուծոյ մեր հոգու մէջ գծած պատկերն եղծել, դարերի ընթացքում Նորա մեզ արած ամբաւ շնորհներն արհամարհել, Նորա բացարձակ հրամանին հակառակ կալ կնշանակէ՝ ուրանալ այն սկզբունքները: որոնք մեր իբրեւ մի ազգային ամբողջութեան, մի առանձին ինքնուրոյն եկեղեցւոյ, պատմական առաջնորդներն են եղել: այն առանձնայատկութիւնները, որոնք մեզ իբրեւ հայ մարդ: իբրեւ Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակ որոշում են: Նա: որ իւր այս պատմական կոչման, իւր խղճի ներքին ձայնին դաւաճանում է: լաւ քաղաքացի լինել չէ կարող: Ուրպէս զի մենք իբրեւ հայ մարդ խղճի մօօք նայսեր արժանի հարկ հատուցանենք՝ հարկաւոր է: որ մեր մարդկային և քրիստոնէական բոլոր արժանապատուութեան գիտակից լինենք: հարկաւոր է որ նախ Աստուծոյ մեր կրճքի տախտակի վերայ դրոշմած գիրը կարգաւ և ըստ այնմ՝ Նորան արժանի յարգ մատուցանել կարողանանք: — Այսպէս ահա կրկնակի սրբազան ոգևորութեամբ թող լեցուին հայ սրտերն այս նշանաւոր օրերում և ջերմագին աղօթքներ թող վեր ելնեն դէպի հայրերի Աստուածը: արեւշատութիւն մաղթելով մեր Աստուածապալկ թագաւորի և Մեծափառ Թագուհու համար: Թող փառապանծ նրեմլի և նախնային:

Եջմիածնի զանգակները հիւսիսից հարաւ միախառնեն իրենց վսեմ՝ զօղանջիւնը: քարոզ կարգալով բոլոր ծշմարիտ հաւատացեալներին: «Երթայք, տո՛ւք զնայսերն նայսեր և զԱստուծոյն Աստուծոյ»:

Կ. Վ.



ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՅՈՎՀԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԹՈՒՂԹԸ:

Առարատի նախորդ համարում (եր. 159) մենք խոստացել էինք շուտով հրատարակել Ձ. դարու քաղկեդոնական վէճերին վերաբերեալ մի շատ կարեւոր պատմական յիշատակարան: և ահա այս համարին իբրեւ յաւելում լոյս է տեսնում այդ յիշատակարանը: որ արտատրուած է Մայր Աթոռի մատենադարանի հ. 517 ձեռագրից: Նորա մանրամասն ուսումնասիրութիւնը ուրիշ առթի թողնելով: մենք համառօտ կականարկենք միայն այստեղ: որ նա առանձին նշանակութիւն ունի Ձ. դարի կեսերում մեր և օտար եկեղեցիների մէջ եղած յարաբերութիւնը պարզելու և որոշելու համար մեր մի քանի կաթողիկոսների հայրապետութեան՝ մանաւանդ Սերսէս Բ. Աշտարակեցու Դուինում գումարած ժողովի ժամանակը: ուր: ինչպէս յիշել ենք: մեր կարծիքով առաջին անգամ Քաղկեդոնի ժողովը մերժուեցաւ: Սակայն նոյն իսկ այս գրութեան ժամանակի որոշումն անյաղթելի դժուարութիւններ է ներկայացնում մեզ առ այժմ: — Ըստ կաղանկատուացւոյ Աղուանից Աբաս կաթողիկոսը հայրապետական աթոռ է նստել հայկական թուականի սկզբում: ուրեմն 551 թ.-ին: և այնուամենայնիւ ժամանակակից է եղել Հայոց Յովհաննէս Բ. կաթողիկոսին: որի հայրապետութիւնը Չամչեանի հաշուելով տեւել է 533-ից մինչև 550-551 թ.: Այս Աբասին Նրուսահէմի Յովհաննէս եպիսկոպոսը թուղթ է գրում իբրեւ յաջորդ Մակար և Եւստոքիոս պատրիարքների: որոնցից վերջինը դեռ կենդանի էր և իւր ներկայացուցիչներն ունէր Ե. կոչուած տիեզերական ժողովի մէջ: որ տեղի ունեցաւ 553

Թ. ին. բայց նա միևնոյն ժամանակ 4 տիեզերական ժողովներ յատկապէս մէջ բերելով այս Ե.Բ ամենեւին չէ յիշում, և առհասարակ նորա թղթի բովանդակութիւնը մանաւանդ «խաշեցար» մասին ունեցած կարծիքը, մեզ տրամադրում է աւելի ենթադրել, որ նա ի. ժողովից առաջ է գրել իւր թուղթը: Ինչպէս պէտք է այս բոլոր կէտերը իրար հետ համաձայնեցնել՝ մութն է առ այժմ մեզ համար: Այսքանը միայն պարզ է ի հարկէ, թէ Աբասին թըղթեր տանողը նոյն Թուաման է, որ Կաղանկատուացու պատմութեան մէջ* առաջին տեղն է յիշուում՝ Հայոց Յովհաննէս կաթողիկոսի գրութեան հիման վերայ Աղուանից երկրից հալածուած խռովարարների շարքում: Սերկայ թղթի մէջ յիշուած Հայոց ժողովը ուր նոքա քաղկեդոնականութիւն մերժել են՝ չէ կարող շատ հին լինել. բոլոր խօսքերից երևում է, որ վեճերը դեռ նոր են սկսուած, որ որոշ չէ դեռ հարեան եկեղեցիների այս խնդրի նկատմամբ բռնած զիրքը, դեռ նոցա փոխադարձ յարաբերութեանց մէջ փոփոխութիւններ մացնել կարելի է: Իսկ այդ ամենը շատ աւելի յարմար է գալիս Զ. դարում, երեսնական քառասնական թուականներին՝ քան Ե. դարում զուամբած մի ժողովի: Շատ կարևոր է այստեղ նաև այն հանգամանքը, որ Երուսաղէմի պատերազմները խառնուում են Հայոց և հարեան եկեղեցիների գործերի մէջ և մի տեսակ իրաւասութիւն են կամենում բանեցնել այդ եկեղեցիների վերայ, որ հայերն այսպիսի վաղ ժամանակներում վանք ու հաստատուն միաբանութիւն են ունեցել Երուսաղէմում: Մեր կարծիքով հայոց և Երուսաղէմի եկեղեցւոյ մէջ եղած յարաբերութիւնը առանձին նշանակութիւն ունի մեր եկեղեցական պատմութեան մէջ: Իսկ հայոց հալածելու մասին այնպիսի տղեղ ինքնաբաւականութեամբ տուած նկարագրութիւնը մի շատ հետաքրքիր տեղեկութիւն է, որ ցոյց է տալիս թէ ինչպէս վաղ և ինչպիսի ընդարձակ սահմաններում է սկսուել քրիստոնեայ հաւատակիցների կողմից հալածանքը հայոց դէմ:

Կ. Վ.

Ս. ԼՈՍԱԼՈՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅԻՍ.

« Ի վերայ Աշոյն եւ Նմիսանի ամսնայն ազգն Հայոց կապեալ կան ».

Առաք. Գաւր. Ժ.:

Ա

Հովիւները Սեպուհի վերայ շրջելու ժամանակ մի քարանձաւի մէջ տեսան մի ծերունի՝ կրթնած իւր դաւաղանի վերայ, բազուկները տարածած և կանգուն մնացած անշունչ: Ո՞վ էր այդ ծերունին, չգիտէին նոքա. «սակայն իմացան ի փառաց լուսոյն, թէ մեծ ծառայ Աստուծոյ է... քարի կարկառ կուտեցին նորա վերայ և թողին հեռացան»:

Հայոց մեծ հովուի՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի մարմինն էր, որ ծանկուեցաւ այդ նորանշան շիրմի տակ Սեպուհի միամիտ հովիւների ձեռքով:

Ինչո՞ւ այդպիսի անյայտութեան մէջ տեղի ունեցաւ աղգիս լուսաւորութեան նահապետի երջանիկ փոխումը. միթէ չար բաղդը հալածել հանել էր նորան մինչև Սեպուհի բարձրաբերձ մենարանները. միթէ՞ մարդատեցութիւնն առաջնորդեց մինչև այդ ճգնարանն այն անձին, որ մարդասիրաբար բազմապատիկ տանջանքների և հնգետատանամայ տարօրինակ բանտարգելութեան դառնութիւնները կրեց՝ մի ամբողջ աղք փրկելու համար, միթէ՞, վերջապէս, մարդկային ապերախտութիւնը վանեց մղեց նորան բազմամարդ շրջաններից դէպի անմարդարենակ այրերը, ուր հրեշտակաբո՞ւն ծերունին, ի վերջոյ, «փոխի մահուամբ ի կարգս հրեշտակաց», պատմութիւնը գրեթէ լուծւում է այս հարցերին արժանաւոր պատասխանը տալու: Բազմաթիւ աւանդութիւններից այսքանը կարելի է իմանալ, որ Ս. Գրիգոր նիկիոյ ժողովից յետոյ, հօտի հովուութիւնն իւր կրտսեր որդուն՝ Ս. Արիստակէսին յանձնելով, հեռացաւ իւր ճգնարանն, ուր սովոր էր մինչ ցայն երբեմն երբեմն առանձնանալ, և այլ ևս չերեցաւ աշխարհին: Մովսէս Խորենացին բացատրում է թէ Ս. Լուսաւորիչ առանձնական կեանք ընտրեց այն պատճառով, որ սիրեց լեռներ և ամայնութիւն և մտքի հանգարտութեամբ ինքն իրեն մէջ կենդրոնանալ, որպէս զի կարողանայ անընդապէս խօսել Աստուծոյ հետ: Անբնական չէ մենաւոր կեանքի այսպիսի մի տենչ ունենալ ծերութեան հասակում: սակայն Մ. Խորենացու բացատրութիւնը գոհացուցիչ չէ, որովհետև Ս. Գրիգոր ոչ թէ միայնացած է երևում, այլ իւր անձը ծածկած, Այս վերջին հանգամանքի նկատմամբ միւս աւանդութիւններն

* Հաստոր Բ Գլուխ Ը: